Սայաթ Նովա

Յիս կանչում իմ լալանին

Ռաբայի բայաթր-թասլիբ. Արութինի ասած:

Յիս կանչում իմ լալանին.
Բաղեշխանեն լալ անին.
Վա՛յ թե հասրաթեդ մեռնիմ,
Բլլբուլ լիզուս լալ անին.
Դոստիոլս հիռու կանգնին, յաղիոլ գան՝ լալ անին:

Քիզ սազ գու քա ալ ղումաշը, նազա՛նի.
Յի՞կ ճակատիդ կապե զարլու մուղայիշ.
Ձեռիդ բրոնե օսկեշլրած մրկրատը,
Խուճուճ-խուճուճ կավիրուդ տուր արայիշ:

Յիս կանչում, իմ յար անին,
Թեշնիս, վարսաղ, յարանին.
Օ՞վ ասավ, թե նահախ տիղ
Յարիդ մեչը յար անին.
Ավետարա՛նը կու տա խոնար մարրթուն էրանին.

Պատվական տեսնելու նովաբ ու նաշար.
Բլլբուլին գրժվեցնող թուփ՝ վարթի սաշար.
Աճկիրուդ ունքիրրդ էլավ մուհաշար.

Թերթերուկիդ մազը՝ զար, օսկու զարնիշ:

Յիս կանչում իմ զայանին.
Նու ու այիբ զայ անին.
Դուն իս ասի՝ նահախ տիղ
Յարի սիրտը զայ անին.
Շահն էր քաշի, չէր դիմանա է՛ս իմ քաշած զայանին:

Հուտրդ աշխար բրոնից՝ Փրոանգի մաշում,
Դաստամազրդ դառավ սիմ ու աբբեշում.
Կրոնիրրդ շիմշատ է, մատնիրրդ է մում.
Ծուցրդ բաղչա ունիս, մեճկրդ է դամիշ:

Յիս կանչում իմ մերանին,
Ըսկրսպնական մեր անին.
Թուզ դոստիրը շատանան,
Թրշնամիքը մեռանին.
Ասի՛ թե յիս քու ախաեբ, քու մերն ինձի մեր անին:

Բեմուրվաթ յա՛ր, խիլքը գրլխես մի՛ տանի.
Դարդիրրս շատացավ քանի՛ մե քանի.
Գիդիմ վուր, յա՛ր, դուն ինձ լայիղ չիս անի,
Դուն մե թաքավուր իս, յիս մե խիղճ դավրիշ:

Յիս կանչում իմ մասանին.
Սե ու այիբ մաս անին.
Յիս քիգնից չիմ հիռանա,
Գուզե ինձ անմաս անին.
Սայաթ Նովեն քու յարն է, թեզուզ մասնեմաս անին:

Դաստամզրդ նրման սընբուլ սուսանի.
Վախում իմ, թե սերրդ սիրտրս կես անի.
Կու մեռնիմ, էլ ինձի պես չիս տեսանի.

Քու Սայաթ Նովեն իմ, մի՛ անի ղիմիշ: